



## ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1) Տեղյա՞կ էք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին: Այո  Ոչ

2) Օգտագործո՞ւմ էք մեթոդաբանություն/փաստաթղթավորում՝ կապված վիճակագրության հետ: Այո  Ոչ

3) Ի՞նչ աղբյուրներից էք օգտվում:

- |  |   |
|--|---|
| <input type="checkbox"/> <a href="http://www.armstat.am">www.armstat.am</a> ( <a href="http://www.armstat.info">www.armstat.info</a> ) | <input type="checkbox"/> Մամուլի հաղորդագրություններ          |
| <input type="checkbox"/> <a href="http://www.ArmStatBank.am">www.ArmStatBank.am</a>  | <input type="checkbox"/> Հրատարակումներ                       |
| <input type="checkbox"/> <a href="http://www.ArmDevInfo.am">www.ArmDevInfo.am</a>  | <input type="checkbox"/> Այլ (խնդրում ենք մասնավորեցնել)..... |

4) Դուք Ձեզ տեղեկացված զգո՞ւմ էք հրատարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում: Այո  Ոչ

5) Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի:

- |   |  |
|---|--|
| <input type="checkbox"/> Որակը                | <input type="checkbox"/> Համապարփակությունը          |
| <input type="checkbox"/> Ցուրածամանակությունը | <input type="checkbox"/> Այլ (խնդրում ենք նշել)..... |

6) Վիճակագրություն արտադրելու համար ՀՀ ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ համատարած հաշվառում, վարչական ռեգիստրներ և ընտրանքային հետազոտություններ.

Խնդրում ենք ներքևում նշել, թե որքա՞ն էք վստահում այդ 3 տվյալների աղբյուրներից յուրաքանչյուրին:

	Բարձր վստահություն	Միջին վստահություն	Ցածր վստահություն
Համատարած հաշվառում			
Վարչական ռեգիստրներ			
Ընտրանքային հետազոտություններ			

Ի՞նչ էք ներկայացնում: Նախարարություն  Միջազգային կազմակերպություն   
 Լրատվամիջոց  Այլ



This project is funded by the European Union


*Շնորհակալություն համագործակցության համար.☺*

**«ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ»  
հարցաթերթի ամփոփում**


2017թ. նոյեմբերի 6-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում վիճակագրական տեղեկատվության սպառողների համար կազմակերպված սեմինարի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 58, որից «Սպառողների համառոտ հետազոտություն» հարցաթերթի լրացմանը մասնակցել է 48-ը կամ նրանց 82.8%-ը:

Ամփոփումից պարզվել է, որ նրանցից 28-ը կամ 58.3%-ը նախարարությունների ներկայացուցիչներ են, 5-ը կամ 10.4%-ը՝ լրատվամիջոցների, 10-ը կամ 31.3%-ը՝ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հարցաթերթի հարցերն առանձին-առանձին ուսումնասիրելով պարզ է դարձել, որ.

1.«Տեղյակ եք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին» հարցին լրացնողներից 38-ը կամ 79.2%-ը պատասխանել է «այո»:




2.«Օգտագործու մ եք մեթոդաբանություն/փաստաթղթավորում՝ կապված վիճակագրության հետ» հարցին լրացնողներից դրական է պատասխանել է 31-ը կամ 64.6%-ը:




3. «Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում» հարցին 48 լրացնողները նշել են 120 նշում, որից 57-ը կամ 47.5%-ը նշել է, որ օգտվում է՝ [www.armstat.am](http://www.armstat.am) (հայելային կայք՝ [www.armstat.info](http://www.armstat.info))-ից, 21-ը կամ 17.5%-ը՝ [www.ArmStatBank.am](http://www.ArmStatBank.am) -ից, 32-ը կամ 26.7%-ը՝ հրապարակումներից, 7-ը կամ 5.8%-ը՝ մամուլի հաղորդագրություններից, 3-ը կամ 2.5%-ը՝ [www.ArmDevInfo.am](http://www.ArmDevInfo.am) -ից:

(%)




4.«Դուք Ձեզ տեղեկացված զգու՞մ եք հրապարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում»: Հարցվողներից ընդամենը 21-ը կամ 43.8%-ն է նշել, որ տեղեկացված է:




6.«Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի» հարցին 48 լրացնողներից եղել է 57 գրառում: Նրանցից 23-ը կամ 40.4%-ը նշել է, որ պետք է բարելավվի որակը, 17-ը կամ 29.8%-ը՝ համապարփակությունը, 5-ը կամ 8.8%-ը՝ յուրաժամանակությունը, 12-ը կամ 21.0%-ն էլ՝ նշել է «այլ»:

(%)



7.«Վիճակագրությունն արտադրելու համար ՀՀ ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ համատարած հաշվառում, վարչական ռեգիստրներ և ընտրանքային հետազոտություններ» հարցին արձանագրվել է 120 նշում, որից 60-ը կամ 50.0%-ը ընդգծել է «բարձր վստահություն», 35-ը կամ 29.2%-ը՝ «միջին վստահություն», 25-ը կամ 20.8%-ը՝ «ցածր վստահություն»:

(%)



«Համատարած հաշվառմանը» վերաբերում է «բարձր վստահության» նշումներից 12-ը կամ 20.0%-ը, «միջին վստահության» նշումներից՝ 17-ը կամ 48.6%-ը և «ցածր վստահության»՝ 5-ը կամ 20.0%-ը:

«Վարչական ռեգիստրներին» վերաբերում է «բարձր վստահության» նշումներից 30-ը կամ 50.0%-ը, «միջին վստահության» նշումներից՝ 12-ը կամ 34.3%-ը և «ցածր վստահության»՝ 6-ը կամ 24.0%-ը:

«Ընտրանքային հետազոտություններին» վերաբերում է «բարձր վստահության» նշումներից 18-ը կամ 30.0%-ը, «միջին վստահության» նշումներից՝ 6-ը կամ 17.1%-ը և «ցածր վստահության»՝ 14-ը կամ 56.0%-ը:

(%)

